



Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կարծիքը ռազմական դրության և կարանտինային իրավական ռեժիմների համատեղ կիրառության հիմնահարցերի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 11-ի «Կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված կարանտին սահմանելու մասին» N 1514-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) նոր կորոնավիրուսային հիվանդության տարածման կախարգելման նպատակով սահմանվել է կարանտին¹:

2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության նկատմամբ Ադրբեյջանի իրականացրած ռազմական ագրեսիայի հետևանքով Հայաստանի Հանրապետությունում հայտարարվեց ռազմական դրություն², որի պայմաններում կարևոր է ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով երաշխավորված իրավական պետության սկզբունքի պահպանումը և իրագործումը: Այս կապակցությամբ քննարկման առարկա պետք է հանդիսանա սահմանված կարանտինային և ռազմական դրության իրավական ռեժիմների համատեղ կիրառելիության հարցը իրավունքների և ազատությունների սահմանափակման խնդրի լույսի ներքո:

1. Արդյո՞ք կարանտինային և ռազմական դրության իրավական ռեժիմները կարող են կիրառվել միաժամանակ:

«ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի 20.2 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կարանտինը վարակիչ հիվանդությունների բռնկումները, համաճարակները տեղայնացնող, վերացնող, վարակի օջախները մեկուսացնող և վարակի հետագա տարածումը, վարակիչ հիվանդությունների ներբերումը (ներթափանցումը) կանխող ռեժիմ է, որը սահմանվում է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում կամ դրա առանձին տարածքներում (հասցեներում)»:

«Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ «Ռազմական դրությունը բացառապես Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքում իրականացվող ժամանակավոր միջոցառում է, որն իրենից ներկայացնում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների,

¹ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=147191>

² <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=146652>



կազմակերպությունների գործունեության հատուկ իրավական ռեժիմ և թույլատրում է իրավաբանական անձանց, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների և ազատությունների որոշակի սահմանափակումների և նրանց նկատմամբ լրացուցիչ պարտավորությունների սահմանում»:

Վերոգրյալ երկու նորմերի մեկնաբանությունից պարզ է դառնում, որ թե՛ կարանտինը և թե՛ ռազմական դրությունը իրենցից ներկայացնում են հատուկ իրավական ռեժիմներ՝ յուրաքանչյուրից բխող սահմանափակումներով:

Իրավաբանական գրականության մեջ իրավական ռեժիմի սահմանման տարբեր մոտեցումներ են առկա, մասնավորապես Վ.Ա. Գորլենկոն նշել է, որ «իրավական ռեժիմը պետության ինքնուրույն իրավական միջոց է, որը կիրառվում է քաղաքացիների անվտանգության ապահովման և սահմանադրական կարգի պահպանման համար՝ որպես իրավունքի սուբյեկտների գործունեության մասնագիտացված կարգ, որը նախատեսված է հատուկ խնդիրների լուծման կամ հատուկ հանգամանքներում հանրային իշխանության սուբյեկտների գործարկման համար»³: Ս.Ս. Ալեքսերը նշել է, որ «իրավական ռեժիմն արտահայտում է (...) որոշակի սահմանափակումների և օգուտների առկայությունը, սուբյեկտների գործունեության թույլատրելի մակարդակը, նրանց իրավական անկախության սահմանները» և միևնույն ժամանակ շեշտում է «տարբեր իրավական առավելությունների և սահմանափակումների իրավական ռեժիմների լուսաբանման գերակա նշանակությունը»⁴:

Տեսության մեջ, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ հատուկ իրավական ռեժիմների համաժամանակյա կիրառման արգելք: Նշվածը հիմնավորվում է այն հանգամանքով, որ յուրաքանչյուր իրավական ռեժիմ հետապնդում է օրենսդրությամբ սահմանված կոնկրետ նպատակներ: Մասնավորապես, ռազմական դրության իրավական ռեժիմի կիրառման նպատակը «Ռազմական դրության մասին» օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և տնտեսության զորահավաքային ծավալման համար առավելագույն բարենպաստ պայմանների ստեղծմամբ Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակմանը դիմակայելն է կամ դրա անմիջական վտանգը կանխելը, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բնականոն գործունեությունն ու մարդկանց կյանքի և անվտանգության պաշտպանությունը ռազմական դրության պայմաններում ապահովելը: Կարանտինային ռեժիմի նպատակը «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության

³ «Իրավական ռեժիմի ինստիտուտը ազգային իրավական համակազում», Կարապետյան Եգոր, Երևան, 2017թ. Էջ 21, հասանելի է <http://etd.asj-oa.am/6917/>:

⁴ Беляева Г.С. Понятие правового режима в теории права: основные подходы. Вестник Саратовской государственной юридической академии · Дополнительный выпуск (85) · 2012, с. 29.



ապահովման մասին» օրենքի 20.2 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարակիչ հիվանդությունների բռնկումները, համաճարակները տեղայնացնելը, վերացնելը, վարակի օջախները մեկուսացնելը և վարակի հետագա տարածումը, վարակիչ հիվանդությունների ներբերումը (ներթափանցումը) կանխելն է: Ակնհայտ է, որ վերոնշյալ իրավական ռեժիմները հետապնդում են միմյանց հետ կապ չունեցող, տարբեր նպատակներ, որոնց զուգահեռ կիրառման օրենսդրական արգելք սահմանված չէ, ուստի ինքնին կարանտինային և ռազմական դրության իրավական ռեժիմների՝ տարածության և ժամանակի մեջ համատեղ կիրառությունը իրավաչափ է, այլ հարց է, թե յուրաքանչյուր իրավական ռեժիմից բխող սահմանափակումների նույնության դեպքում որ սահմանափակմանը պետք է նախապատվություն տրվի:

Հայտնում ենք նաև, որ կարանտինային իրավական ռեժիմից և ռազմական դրությունից բխող միջոցառումների իրականացումը ապահովում են միևնույն մարմինները և նման պայմաններում հարց է առաջանում, թե արդյո՞ք ռազմական դրության աշխատանքային ռեժիմում գտնվող մարմինը կարող է ապահովել և կատարել նաև կարանտինային իրավական ռեժիմից բխող միջոցառումների իրականացումը: Մասնավորապես, ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի 1586-Ն որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերը, այլ զորքերը քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների լիազոր պետական մարմնի ուժերը փոխադրվում են պատերազմական ժամանակաշրջանի կազմի և կառուցվածքի:

«Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» մասին օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, արդարադատության, առողջապահության, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների բնագավառների պետական լիազոր մարմինների ուժերն ու միջոցները կիրառվում են հետևյալ միջոցառումների իրականացման նպատակով.

ա) հասարակական կարգի պահպանություն և հասարակական անվտանգության ապահովում.

բ) ռազմական դրություն հայտարարված տարածք մուտք գործելու և տարածքից դուրս գալու հատուկ ռեժիմի իրականացման ապահովում.

գ) բնակչության կենսագոյությունը, ռեժիմային, հատուկ ռեժիմային, հատուկ պահպանվող օբյեկտների և տրանսպորտի գործունեությունն ապահովող, ինչպես նաև բնակչության կյանքի և առողջության, շրջակա միջավայրի համար առավել վտանգ ներկայացնող օբյեկտների պաշտպանություն.



դ) անօրինական զինված խմբավորումների գործունեության, ահաբեկչական և դիվերսիոն գործողությունների բացահայտում, կանխում և խափանում.

ե) **քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ապահովում.**

ե.1) ռազմական դրության պայմաններում բնակչության բժշկական օգնության և սպասարկման ապահովում, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններին բնակչության բնական կենսագոյության ապահովման համար լրացուցիչ ուժերի և միջոցների ծավալման վերաբերյալ առաջադրանքների տրամադրում.

զ) սույն օրենքով սահմանված ռազմական դրության ռեժիմի ապահովմանն ուղղված այլ միջոցառումների իրականացում:

ՀՀ կառավարության 2020 թվականի 11 սեպտեմբերի թիվ N 1514-Ն որոշման համաձայն՝ «... որոշման 2-րդ կետով նախատեսված միջոցառումները և սահմանափակումները կիրառվում են «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով՝ այդ օրենքներով նախատեսված մարմինների կողմից:

«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ **«բնակչության պաշտպանությունը՝** արտակարգ իրավիճակում մարդկանց կյանքի և առողջության պաշտպանությունը, վտանգների կանխմանը և նվազեցմանը, բնականոն կենսագործունեության ապահովմանը և վերականգնմանն ուղղված իրավական, կազմակերպական, ինժեներատեխնիկական փոխկապակցված միջոցառումների համալիր է»:

«Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասից և «բնակչության պաշտպանության» սահմանումից բխում է, որ բնակչության պաշտպանության միջոցառումները նույնպես ներառվում են ռազմական դրության աշխատանքային ռեժիմում կատարման ենթակա գործողությունների ցանկում, ուստի ռազմական դրության աշխատանքային ռեժիմում գտնվող մարմինների կողմից սանիտարահամաճարակային և առհասարակ բնակչության պաշտպանությունից բխող միջոցառումների իրականացումը օրենքով սահմանված է որպես ռազմական դրությունից բխող միջոցառում և չի հակասում ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածին: Սակայն հարկ է շեշտել, որ սանիտարահամաճարակային միջոցառումները իրականացվում են ոչ թե կարանտինային իրավական ռեժիմի ուժով, այլ ռազմական դրության, քանի որ, ինչպես նշվեց, Կառավարության համապատասխան որոշման հրապարակումից հետո այդ



մարմինների աշխատանքային ռեժիմը վերափոխվում է ռազմականի:

2. Արդյո՞ք կարանտինային և ռազմական դրության իրավական ռեժիմներից բխող սահմանափակումները նույնանում են և արդյո՞ք կարող են կիրառվել միաժամանակ:

Սահմանափակումների գաղափարը հիմնված է այն իրողության վրա, որ մարդու իրավունքների մեծ մասը բացարձակ չէ և արտացոլում է անհատի և հասարակության շահերի միջև հավասարակշռությունը⁵: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի տրամաբանությունը հանգում է նրան, որ հնարավորության սահմաններում պետությունները սահմանափակեն իրավունքները, այլ ոչ թե՝ շեղվեն դրանցից⁶: Չնայած իրավունքների սահմանափակումը և կոնվենցիոն դրույթներից շեղումը ենթադրում են իրավական ինքնավար ընթացակարգեր, մարդու իրավունքների միջազգային օրենսդրությունը պահանջում է, որ դրանք հիմնված լինեն օրինականության, անհրաժեշտության և համաչափության ընդհանուր սկզբունքների վրա, որոնք ուղենիշային պետք է լինեն պետության ձեռնարկած միջոցառումների իրավաչափությունը գնահատելու համար⁷:

Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ «Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր»:

ՀՀ սահմանադրական դատարանի ձևավորած իրավական պրակտիկայի համաձայն՝ «ցանկացած օրենսդրական կարգավորում, այլ ոչ թե միայն որևէ հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակում, պետք է նպատակ ունենա և ապահովի բոլոր հիմնական իրավունքների (1) արդյունավետ իրականացման համար (2) անհրաժեշտ (3) կազմակերպական (4) կառուցակարգեր և (5) ընթացակարգեր: Միայն բոլոր այս պայմանների միաժամանակյա առկայությունը ցանկացած օրենսդրական կարգավորման մեջ, առավել ևս որևէ հիմնական իրավունք կամ ազատություն սահմանափակող օրենսդրական կարգավորման մեջ, կարող է ապահովել դրա համապատասխանությունը Սահմանադրությանը⁸»:

⁵ Erica Daes, The Individual's Duties to the Community and the Limitations on Human Rights and Freedoms under Article 29 of the U.D.H.R., UN Doc. E/CN.4/Sub.2/432/Rev.2 (1983) (part 3 of which deals with derogations)

⁶ Dominic McGoldrick, The interface between public emergency powers and international law, p. 384.

⁷ Տե՛ս ավելի մանրամասն «Մարդու իրավունքների վիճակը Հայաստանի Հանրապետությունում COVID-19 համավարակի կանխման նպատակով սահմանված արտակարգ դրության պայմաններում» գեկույցը, էջ. 7:

⁸ Տե՛ս 8 հունիսի 2020 թվականի ՍԴՈ-1546 որշքւմը, էջ. 28:



Կարանտինային և ռազմական դրության իրավական ռեժիմից բխող սահմանափակումներն իրենց ողջ համակցության մեջ որոշ դեպքերում նույնանում են և անձի իրավական կարգավիճակի վրա ունենում կրկնակի հետևանքներ ու ազդեցություններ՝ տարբերվող ծավալներով: Երկու ռեժիմների դեպքում սահմանափակումները որոշ դեպքերում ընդգրկում են նույն իրավունքները, սակայն սահմանում սահմանափակումների և արգելքների տարբեր ծավալներ և ինտենսիվության աստիճաններ:

Այս կապակցությամբ իրավական ռեժիմների գերակայության, հետևաբար՝ իրավունքի սահմանափակումների լայն կամ նեղ ծավալի նախապատվության հարցում օրենսդրական կանոնակարգումները բացակայում են: Հիմնական իրավունքները և ազատությունները, այդ թվում՝ վերջիններիս սահմանափակումները առավել ամբողջական և արդյունավետ իրացնելու համար օրենսդրական կարգավորման կարիք ունեն: Որպեսզի նորմատիվ կարգավորումը լինի արդյունավետ և ծառայի սահմանադրական հիմնական իրավունքների ամրագրմամբ հետապնդվող նպատակներին, այն պետք է ներառի մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների՝

1. *իրականացման սահմաններն ու եղանակները,*
2. *սահմանափակման կանոնները,*
3. *իրացման տարբերակված ռեժիմները,*
4. *պաշտպանության և պահպանության ընթացակարգերը,*
5. *խախտման համար պատասխանատվության և հարկադրանքի այլ միջոցները,*
6. *խախտումների վերականգնման և պատճառված վնասի հատուցման ձևերի ու չափերի սահմանումը,*
7. *հնարավոր խախտումների կանխման և նախականիման միջոցների թվարկումը⁹:*

Կարանտինային և ռազմական դրության իրավական ռեժիմները կարգավորող իրավական ակտերը հիմնականում պարունակում են վերը թվարկված հատկանիշները, բացառությամբ 3-րդ կետի՝ իրացման տարբերակված ռեժիմների և այդ ռեժիմների խախտման մասով պատասխանատվության միջոցների՝ նույն արարքի համար կրկնակի պատասխանատվության սկզբունքից չչեղվելու առումով: Մասնավորապես, իրացման տարբերակված ռեժիմների առնչությամբ առկա է իրավական բաց հավաքների և գործադրությունների կազմակերպման, մուտքի և ելքի ռեժիմների գործադրման դեպքերում:

⁹ Տե՛ս Ա. Վաղարշյան, Մարդու իրավունքների ու ազատությունների կենսագործման և սահմանափակման սահմանադրական նորամուծությունները (համակարգային և ձեկական իրավաբանական մեկնարանություն), էջ.6: Սկզբնաղբյուրը՝ Глухарева Л. И. Права человека в современном мире (социально-философские основы и государственно-правовое регулирование). М., 2003, էջ 158:



3. Հավաքներ և գործադրույններ, մուտքի և ելքի սահմանափակումներ

Ռազմական դրության պայմաններում Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում **արգելվում է** հավաքների և գործադրույնների կազմակերպումը, անցկացումը և դրանց մասնակցելը:

Կարանտինային ռեժիմի պայմաններում հավաքներ կազմակերպել, անցկացնել և հավաքներին մասնակցել **թույլատրվում է** միայն սահմանված անհատական պաշտպանության միջոցների կիրառման և անձանց միջև նվազագույնը 1.5 մետր հեռավորության պահպանման դեպքում:

ՀՀ Կառավարության թիվ 1586 որոշման 15-րդ կետի համաձայն՝ «Սահմանվում է Հայաստանի Հանրապետության տարածք մուտքի և ելքի հատուկ ռեժիմ: Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունը, Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը **կարող են անձանց արգելել** Հայաստանի Հանրապետություն մուտք գործելը (բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների) և Հայաստանի Հանրապետությունից դուրս գալը՝ պետական անվտանգության, մարդկանց կյանքի և անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված:

ՀՀ կառավարության թիվ 1514 որոշմամբ սահմանվել է մուտքի և ելքի հատուկ ռեժիմ և վերջինից բխող սահմանափակումներ, մասնավորապես՝

«1. Ցամաքային սահմանի անցակետերով արգելվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց մուտքը Հայաստանի Հանրապետություն՝ բացառությամբ՝ 1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտանիքի անդամների և Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով բնակվելու իրավունք ունեցող անձանց, 2) դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների և նրանց ընտանիքի անդամների, 3) հոգեհանգստի կամ թաղման արարողությանը մասնակցելու նպատակով մուտք գործող անձանց, եթե նրանք հանդիսանում են հանգուցյալի մերձավոր ազգականը (ծնողը, ամուսինը, երեխան, քույրը, եղբայրը), 4) միջպետական բեռնափոխադրումներ իրականացնող վարորդների, բեռնատար գնացքների շարժակազմի մեքենավարների (այդ թվում՝ նրանք, ովքեր բեռնատար ավտոմեքենաների, գնացքների շարժակազմերի բեռնաթափումից հետո լքում են



Հայաստանի Հանրապետության տարածքը), 5) այն առանձնահատուկ դեպքերի, երբ սահմանապահ գորքերի հրամանատարը, հաշվի առնելով մուտքի հրատապությունը և անհրաժեշտությունը, ինչպես նաև այդ երկրներում (տարածքներում) համաճարակային իրավիճակը, թույլատրում է անձանց՝ Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելը»:

Ակնհայտ է, որ Կառավարության նշված երկու որոշումները պարունակում են իրարամերժ կարգավորումներ, որոնցից յուրաքանչյուրն արդարացնում է իր կարգավորման առարկան կազմող ռեժիմից բխող նպատակի իրացումը, սակայն հարկ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ նշված երկու հատուկ ռեժիմների առաջնահերթության վերաբերյալ օրենսդրական կարգավորման բացակայության պայմաններում ստեղծվում է մի իրավիճակ, երբ նախապատվությունը պետք է տրվի այն իրավական ռեժիմին, որը պարունակող իրավական ակտը ընդունվել է առավել վաղ՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի: Համաձայն վերջինի՝ «1. Նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև կոլիզիաների դեպքում, ըստ հերթականության, կիրառվում են հետևյալ կանոնները, ընդ որում, յուրաքանչյուր հաջորդ կանոնը կիրառվում է, եթե կիրառելի չէ նախորդ կանոնը՝ (...) **3) ավելի վաղ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի նորմերը (...):**

Հարկ է նշել սակայն, որ նշված մոտեցումը չի բխում սոցիալական հարաբերությունների ներկա զարգացման լավագույնս կարգավորման մոտեցումից, քանի որ հավաքների, մուտքի և էլքի սահմանափակումների՝ ըստ ռազմական դրության ռեժիմի՝ կարգավորումը հրամայական է, որին նաև պետք է ուղղված լինեն իրավական ակտերը, ըստ այդմ, անհրաժեշտ է հավաքների, մուտքի և էլքի սահմանափակումների կիրառման հարցում օրենսդրական համապատասխան փոփոխությունների միջոցով առաջնահերթությունը տալ ռազմական դրության ռեժիմի սահմանափակումներին՝ սահմանելով, որ ռազմական դրության ռեժիմից բխող սահմանափակումները գերակա են այլ իրավական ակտերից բխող սահմանափակումների նկատմամբ:

Քննարկման առարկա հանդիսացող սահմանափակումների իրավաչափությունը հարկ է գնահատել նաև նույն արարքի համար կրկնակի պատասխանատվության բացառման իրավական սկզբունքի ապահովման տեսանկյունից:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182.4-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող սահմանափակումների խախտման համար, իսկ 182.5-րդ հոդվածը՝ ռազմական դրության իրավական ռեժիմի ընթացքում գործող կանոնները խախտելու համար:



Ինչպես վերը նշվեց, թե՛ ռազմական և թե՛ կարանտինի իրավական ռեժիմներ սահմանող իրավական ակտերը ներկայում գործում են և որոշ դեպքերում սահմանափակվող իրավունքները նույնանում են, նման հանգամանքներում հարց է առաջանում, թե որ ռեժիմով սահմանված խախտման համար պետք է վրա հասնի պատասխանատվությունը: Նույն արարքի համար կրկին չդատվելու» (non bis in idem) սահմանադրական և միջազգային իրավական սկզբունքն ընկած է իրավունքի բոլոր ճյուղերի հիմքում, ուստի կանոն է նաև, որ հատուկ իրավական ռեժիմների համատեղ կիրառման դեպքում չառաջանան այնպիսի կոլիզիաներ, երբ երկու ռեժիմների խախտումը նույն արարքով հանգեցնի կրկնակի պատասխանատվության: Անհրաժեշտ է օրենսդրական նախաձեռնության միջոցով սահմանել ռազմական դրության իրավական ռեժիմի առաջնահերթության գաղափարը՝ միաժամանակ պահպանելով կարանտինային իրավական ռեժիմը, քանի որ կարանտինային իրավական ռեժիմի մերժումը ռազմական դրության պայմաններում կարող է հանգեցնել աղետալի հետևանքների՝ բնակչության հակահամաճարակային պաշտպանվածության տեսանկյունից:

Ըստ այդմ, առաջարկում ենք՝

«Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի 8-րդ հոդվածը լրացնել հետևյալ խմբագրությամբ 3-րդ մասով՝ ***«Ռազմական դրության իրավական ռեժիմից բխող իրավունքի սահմանափակումները գերակա ուժ ունեն այլ իրավական ռեժիմներից բխող իրավունքի սահմանափակումների նկատմամբ՝ այդ ռեժիմից բխող իրավունքի սահմանափակման նվազ խիստ լինելու դեպքում: Նշված սահմանափակումների խախտման դեպքում կիրառելի են ռազմական դրության իրավական ռեժիմը խախտելու համար պատասխանատվություն նախատեսող նորմերը»:***

5. Ամփոփում

1. Հաշվի առնելով կարանտինային և ռազմական դրության իրավական ռեժիմներով հետապնդվող նպատակների տարբերությունը, ինչպես նաև օրենսդրությամբ կարանտինի և ռազմական դրության իրավական ռեժիմների համատեղ կիրառության արգելքի բացակայությունը՝ նշված երկու իրավական ռեժիմները կարող են կիրառվել միաժամանակ:
2. «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի 8-րդ հոդվածը լրացնել հետևյալ խմբագրությամբ 3-րդ մասով՝ ***«Ռազմական դրության իրավական ռեժիմից***



*բխող իրավունքի սահմանափակումները գերակա ուժ ունեն այլ իրավական
ոեժիմներից բխող իրավունքի սահմանափակումների նկատմամբ՝ այդ ոեժիմից բխող
իրավունքի սահմանափակման նվազ խիստ լինելու դեպքում: Նշված
սահմանափակումների խախտման դեպքում կիրառելի են ռազմական դրության
իրավական ոեժիմը խախտելու համար պատասխանատվություն նախատեսող
նորմերը»:*